ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՏԱ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	ԱՏԱ ՍՊԸ	ԱՏԱ ՍՊԸ	ԱՏԱ ՍՊԸ	Մեդալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Կախիչը ասեղային ամրակով. Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 2.5մմ (շեղում՝ +/- 0.2մմ): Մեդալի ոսկեգույն շրջանաձև ֆոնի կենտրոնում պատկերված է Սիս և Մասիսը խորհրդանշող եռագույն թևերով թագակիր արծիվը: Մասիսի ստորոտում պատկերված է ալիքված կյանքի գետ Արաքսը: Արծիվը

				կրում է փրկարար օղակ՝ կենտրոնում փրկարարի մուգ կապույտ եռանկյունի խորհրդանիշը: Փրկարար օղակի ներքևում դափնու ճյուղ է: Արծվի մի ձեռքում հավերժության փրկության ջահն է: Մեդալի վրա պատկերված արծվի գլխավերևում Սիսն ու Մասիսն են՝ շողացող արևով: Մեդալի եզրագծի վերին մասում գրված են «ՀԱՅԱՍ¬ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ՕԳՆՈՒ¬ԹՅՈՒՆ, ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» բառերը: Մեդալն ունի վեցանիստ սեղա¬նաձև կախիչ՝ 30x45 չափսերով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակա¬գրու¬թյամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը բաց կապույտ է (CMYK 100;80;3;15), կենտրոնով անցնող 7 մմ դեղին (CMYK 4;20;95;13) զոլակով, որի միջով անցնում են 2 հատ 1 մմ լայնությանբ կանաչ (CMYK 80;7;100;35) զոլակներ: Մեդալի դարձերեսին հորիզոնական 3 տողերով գրված են «ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻ¬ՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, 2 տողով՝ «MINISTRY OF EMERGENCY SITUATIONS RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0675-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը ՝ Arial Armenia: - Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին՝ ունենալով նույն համաձուլվածքը, ռելիեֆիային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը

				ապահովում է մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում ` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (էսքիզ 2):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
2				